

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է ֆ օ ն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է լ է ֆ օ ն № 253.

Բ Ա Ց Վ Ա Ս Ե Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՌԱՋԻԿԱՅ 1901 ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(29-ՐԴ ՏԱՐԻ)

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՐԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Ե ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

Ա մ ե ն օ Ր բ ա ց ի տ օ ն ե ռ ի ն յ ա ջ ո Ր դ ո ղ օ Ր ե Ր ի ց .

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մ» շ ա կ ի յ տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ եւ տասն
ամսականը՝ 9 ռ., ինն եւ ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ
ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. եւ մի
ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ ե Ր ի կ ա յ ի բաժանորդները պէտք է
վճարեն տարեկան 7 ռուբլի. եւ ր օ ա յ ի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պ ա Ր օ կ ա տ ա ն ի
բաժանորդները 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազմաթիւ եւ Բարձրագոյն փողոցների
անկիւնը):

Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակ-
ներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է գիտնել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция
«МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Զ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

Գալուստ Թարութիւնեան իր ամուսնով, Եկատերինա Բէթանեան, գնդապետ Գա-
պար Թարութիւնեան եւ իր որդի Գէորգ Ստեփանեանները խորին վշտով յայտնում են
ազգականներին, բարեկամներին եւ ծանօթներին իրանց անսոսանալի եղբոր՝

ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՏԵՓԱՆԷԻ

մահվան մասին, որ տեղի ունեցաւ նոյեմբերի 13-ի գիշերը կարճատեւ, բայց ծանր հի-
ւանդութիւնից յետոյ: Հոգեհանգիստը ամեն օր երեկոյեան 6 ժամին, իր սեփական
տանը, Եկատերինայի փողոցի վրա, № 132. Թաղման մասին կը յայտարարվի ա-
ռանձին:

1—1

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այս ակնկալութիւնը կար եւ ապրում էր
մահմեդական լուծի տակ տանջվող քրիստոնեայ
ազգերի մէջ եւ հիմնված էր իրական փաստե-
րի վրա: «Փրանգտանը», այսինքն Եւրօպայի,
խաչակիրների ութ արշաւանքներով ցոյց էր
տուել, որ ինքը անտարբեր չէ դէպի նոյն իսկ
Փոքր-Ասիայի քրիստոնեաների վիճակն ան-
գամ իսկ երբ իրողութիւն դարձաւ, որ օս-
մանեան թիւրքերը հաստատվել են Բալկա-
նեան թերակղզում, Եւրօպայի հասկացաւ, որ
քաղաքական մեծ անհրաժեշտութիւն է նրանց
նորից վտնդել Ասիա. այդ նպատակով նա եւ-
րոպական խաչակիր արշաւանքներ հանեց,
որոնք, սակայն, աջողութիւն չունեցան. թիւր-
քերը շատ պինդ էին նստել եւրօպական հողի
վրա, թէեւ քրիստոնեայ զինուորութիւնը ա-
րիարար էր կուռում նրանց դէմ: Պատերազմա-
կան վերջին արիւնահեղ գործողութիւնները
տեղի ունեցան Կ. Պոլսի նուաճումից մի քանի
տարի առաջ (1444 եւ 1448 թւերին). կաթօլիկ
կղերը կուռում էր խաչակիր զօրքերի շարքում
եւ Վիդիլի արիւնահեղ, բայց քրիստոնեա-
նեան համար դժբաղդ պատերազմի մէջ զին-
ւորի մահ գտան մի քանի եպիսկոպոսներ: Կ.
Պոլսի գրաւումը այն սոսկալի հարուածն էր,
որ կիսալուսինը հասցնում էր խաչին: Նա
սարսափ եւ ցնցում տարածեց ամեն տեղ. ա-
րեւելեան հարցի նոր կերպարանքը Եւրօպայի
համար մի խնդրող իրականութիւն էր դառ-
նում, զինված իսլամը պայտնում էր տակի իր
ահաւոր դրօշը արեւմտեան աշխարհի սրտում:
Օսմանցիներին Եւրօպայից վտնդելու հարցը

աւելի եւս ստիպողական, հրատապ հարց էր
դառնում: Մէհմեդ II-ի Կ. Պոլսում հաս-
տատվելուց չորս ամիս յետոյ Նիկիայի V պա-
պը հրատարակեց կոնդակ մի նոր խաչակիր
արշաւանքի մասին թիւրքաց սուլթանի, «երկ-
րորդ Սենեքերիմի» դէմ: Նա համոզում էր
քրիստոնեայ թագաւորներին միասնալ, սահմա-
նում էր տասանորդ եկեղեցական բոլոր ար-
դիւնքներից, խաչակիրներին մեղքերի թողութի-
ւին էր խոստանում: Թիւրքերի դէմ պատե-
րազմ սկսելու միտքը սկսեց արծաթով Գեր-
մանիայում, ուր յատուկ ժողովներ գումարվե-
ցան գերմանական իշխանների ներկայացու-
ցիներից եւ հոգեւորականներից: Ամենքը ըզ-
րում էին, որ անհրաժեշտ է կոխ յայտարարել
կիսալուսինին, բայց անգաղին մեծամասնութիւնը
հաստատում էր, որ այդ պատերազմը սկսելուց
որ առաջ անհրաժեշտ է բարեկարգութիւններ
մտցնել եկեղեցական գործերի մէջ: Հարցը
ձգձգվեց եւ մինչեւ բաւարար լուծում ստա-
նալ Նիկիայի V մեռաւ, խորտակված այն
վշտից, որ պատճառել էր նրան Կ. Պոլսի ան-
կումը: Բայց թիւրքերի դէմ պատերազմ մղե-
լու միտքը այնուհետեւ դարձաւ մի պարտա-
ւորութիւն, որ կարգիւնների ժողովը դնում
էր իւրաքանչիւր նոր ընտրվող պապի վրա *):
Նուաճված յոյներին մնում էր ապագայի
յոյսը: Արեւմտեան Եւրօպայի յուզմունքը մի
առաջնորդ էր նրանց համար, որ ցոյց էր տա-
լիս թէ երկար չը պիտի տեւէ 1453-ի մայիսի
29-ին հաստատված արիւնոտ իրականութիւնը:
Պատմագիր Փրանցա, նկարագրելով Կ. Պոլսի
եւ Յունաստանի նուաճումը, գուշակում էր,
որ թիւրքաց սուլթանները միայն 365 տարի
գոյութիւն կունենան **): Մարգարէական գու-
շակութիւնները արին եւ Լեւոն Իմաստունը,

*) Веберъ—«Всеобщая История», т. IX, М., 1896, стр. 77—81.
**) Грегоровиуъ—«Исторія города Афинъ», СПб., 1900, стр. 349.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այսօրվայ նիստի առիթով.—Ներքին Տե-
սնութիւն. Խորէն եպիսկոպոս Ստեփանէ. Մա-
կար աղայի կտակը. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
Քին Տեսնութիւն. Նամակ Թիւրքիայից. Ար-
տաքին լուրեր.—Հեռագրութիւն.—ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական
պապարութիւն.

ԱՅՍՈՐՎԱՅ ՆԵՍԻՒ ԱՌԻԹՈՎ

Այսօր, չորեքշաբթի, նոյեմբերի 14-ին,
կը կայանայ ներսիսեան դպրոցի հոգաբար-
ձական նիստը նոր կազմութեամբ: Այսօր-
վանից հոգաբարձութեան նիստերին պէտք
է մասնակցին երկու քահանաներ, որոնք
չեն ընտրված ժողովրդական պատգամա-
ւորներից: Այդպիսով այսօր առաջին ան-
գամ հարուած հասցրված կը լինի այն
ժողովրդական սկզբունքին, որով ղեկավար-
վում էր դպրոցը քառասուն տարվայ ըն-
թացքում:

Նոր կարգը գոյութիւն չունի ոչ Շուշու
եւ ոչ Երեւանի թեմական դպրոցներում:
Առաջինում այդպիսի կարգի մասին հարց
չէր յարուցված, իսկ երկրորդում անկարե-
ւի եղաւ նրան մտնել, որովհետեւ թէ ժո-
ղովրդական պատգամաւորները եւ թէ քա-
հանները հաւանութիւն չը տունի այդ
բոլորովին աւելորդ նորմուծութեան, որ
կարող է դառնալ աղբիւր ամեն տեսակ
թիւրիմացութիւնների եւ անպատեհու-
թիւնների: Իսկ երեւանում դեռ յայտնի
չափով պահպանված էր ժողովրդական
ընտրողական սկզբունքը, որովհետեւ քա-
հանների ընտրութիւնը վերապահված էր
ժողովրդական պատգամաւորների:

Սակայն այն, ինչ որ ուրիշ տեղ ճշդու-
թիւն չունեցաւ, հանդիսաւոր կերպով ի-
րագործվեց Թիֆլիսում հակաժողովրդա-
կան ձգտումներին համակրող անձանց գոր-
ծակցութեամբ: Թիֆլիսի ժողովրդական
պատգամաւորները թէեւ խօսեցին մասնա-
ւորութիւն, Ազաթանգեղոսը եւ ուրիշները.
այսինքն առում էին թէ կը գայ մի ազգ, որ կը
յարձէ իսմայէլացիներին ու կազատէ Կ. Պո-
լսը **): Այս այսպիսի գուշակութիւններն է
ակնարկում Առաքել Բաղդիսեցի: Ժողովուրդը,
գոնէ նրա այն մասը, որ հասկանում էր հայ-
րենիքին վիճակված դժբաղդութեան ամբողջ
ծանրութիւնը, հաւատում էր այդ գուշակու-
թիւններին, պահում էր նրանց իր սրտի մէջ
իրեն միակ միութարութիւն: Իսկ Եւրօպայի
չարունակ թիւրքերը էր նրան, որ այդպէս
չարունակ թիւրքերը էր նրան, որ այդպէս
էլ հարկաւոր է, որ պէտք է յուսալ եւ ապաստ-
ւել:

Նիկիայի V-ի յաջորդ Կաթիկոս III ծերու-
նի պապը եռանդուն պատրաստութիւններ էր
տեսնում թիւրքերի դէմ պատերազմ սկսելու
համար. նա չնչին գնով վաճառեց իր նախորդի
հաւաքած գեղարուեստական գործերը, դադա-
րեցիքն նրա սկսած փառաւոր շինութիւնները,
որպէս զի միջոցներ ունենայ իր նուիրական
միտքը իրագործելու համար: Կաթօլիկ հոգեւո-
րականութիւնը ամեն տեղ բորբոքում էր թա-
գաւորներին եւ նրանց հպատակներին իրանց
քարոզչութիւնով: Մի քանի հպատակներ, այդ կրա-
կոտ հրաւերների ազդեցութեան տակ, իրանց
ուսերի վրա կարեցին կարմիր խաչեր, բայց
չարժումը մեծ չափեր չընդունեց. արքունիք-
ները, բարձր դասակարգը անտարբեր մնացին:
Եւ սակայն որպիսի յարմար միջոց էր Եւրօպայի
ձեռքից փախցնում: Օսմանեան բռնապետու-
թիւնը ունէր իր սահմանների վրա երկու ա-
նողք թշնամիներ, երկուսն էլ քրիստոնեայ,
երկուսն էլ մեծահոգի հերոսներ, որոնք շատ
անգամ ջարդել էին անպարտելի համարվող
թիւրքերին: Դրանցից մէկը Ունգարիայի կա-
ռավարիչ Եանուշ Հունիադն էր, միւսը Ալբա-
նիայի իշխան Իւրի Կասարիօս, որին թիւրքե-
րը անուանում էին Իսկէդէր-բէկ:

***) Житаревъ—«Русская Политика въ Восточ-
номъ Вопросѣ», т. I, М., 1896, стр. 29.

ւոր կերպով նոր կարգի դէմ, բայց չը հե-
տեցին երեւանի պատգամաւորների օրի-
նակին եւ իրանց կարծիքները կամ բողոք-
ները չը հասցրին բարձր հոգեւոր իշխա-
նութեան: Թիֆլիսի թեմակալ առաջնոր-
դը, որի գլխաւոր ղեկավարութեան տակ
կատարվեցին ընտրութիւնները, չը կամե-
ցաւ ընթացք տալ ծխական պատգամա-
ւորների յայտարարութիւններին եւ մերժեց
ընդունելու նրանց խնդրքը, որի մէջ
յայտնված էր ժողովրդականների կարծիքը
ընտրութիւնների մասին:

Դա ընտրող մի դէպք էր գաղափար
կազմելու, թէ որքան անօգնական է զգում
իրան ծխական համայնքը իր իրաւունքնե-
րը պաշտպանելու գործում եւ թէ ինչ
հակումներ են կրում իրանց մէջ մեր հո-
գեւորական գործողները: Այդպիսի դէպքերը
պէտք է ուսումնասիրել եւ լաւ յիշել, որ-
պէս զի ապագայ անցքերի եւ կարիքների
ժամանակ ժողովուրդը լաւ գիտենայ, թէ
ու՞մ հետ նա պէտք է գործ ունենայ եւ
ինչ բու՞ն նա կարող է տալ այդ կամ այն
գործող անձին:

Ծանր է խոստովանել, որ Թիֆլիսը
տուեց հակաժողովրդական հոգաբարձու-
թեան առաջին օրինակը, այն Թիֆլիսը,
որի ժողովրդական ներկայացուցիչները սը-
րանից 38 տարի առաջ ամիսներ շարունակ
ամենամեծ ճիգերով եւ ջանքերով մշակեցին
ներսիսեան դպրոցի համար կանօնադրու-
թիւն, որի մէջ պահպանված է ժողովր-
դական սկզբունքը եւ որը վաւերացրած է
Մատթէոս կաթօլիկոսի ստորագրութեամբ,
դառնալով այդպիսով մի պայմանագրով
ժողովրդի եւ կաթօլիկոսի մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՏԵՓԱՆԷԻ

Մեռաւ եւ Խորէն եպիսկոպոս Ստեփանէն:
Այդ կորուստը ծանր է ոչ միայն հայ եկեղե-

Մաջար հերոսը ոչ միայն ոգեւորում էր իր
զօրքերը եւ տանում նրանց ենիչէնների անեղ
բանակի դէմ ու մեծ յաղթութիւններ տանում
(նա միայն մի անգամ յաղթվեց թիւրքերից),
այլ եւ չեղման պահին հրաւիրում էր արեւմտեան
ազգերը միանալ, օգնութիւն ուղարկել, որով-
հետեւ թիւրքերին Եւրօպայից վտնդել քրիս-
տոնեայ ազգերի ոչ միայն չանք է պահանջում,
այլ եւ պատիւը: Սակայն հերոսի ազաղակներն
էլ արձագանք չէին գտնում Եւրօպայում. այս-
տեղ իւրաքանչիւր իշխող իր մանր մուշկ գոր-
ծերով, ներքին պատերազմներով ու վէճերով
էր զբաղված: Այդ է պատճառը, որ պապի հը-
րաւերները, հոգեւորականութեան քարոզներն
էլ անպտուղ էին մնում եւ Հունիադ չնչին ոչ-
մեղով էր մղում իր հերոսական պատերազմե-
րը: Միայն ֆրանցիսկեան վարդապետ Կապիտ-
րանկօ կարողացաւ իր պերճաւոր քարոզներով
հաւաքել Գերմանիայում մօտ 60,000 մարդ եւ
տանել Հունիադի մօտ: Այդ խաչակիր բանակը
բաղկացած էր հասարակութեան տակաւններից
—գանազան բախտախնդիրներից, փախստա-
կաններից, վատ բարքի տէր քաղաքացիներից:
Բայց մաջար հերոսի ռազմական տաղանդը
կարգ ու կանօն հաստատեց այդ խառնիճաղանձ
ամբոխի մէջ: Հունիադ, ունեւորական զօրքե-
րի եւ այդ ամբոխի գլուխն անցած դուրս ե-
կաւ Կ. Պոլսը: Նուաճումը դէմ, որ 150,000 ըն-
տիր զօրք ունէր իր հրամանի տակ: Բէլգրադի
չորջր բոլորվեց պատերազմ, քրիստոնեաները
այնքան սարսափելի շարք տուին օսմանցիներ-
ին, որ Մէհմեդէր կատաղած կուռ մէջ մտաւ.
բայց ստանալով ծանր վէճը, այդ հոգակիւծ
աշխարհակալը ստիպւած եղաւ յետ քաշել իր
զօրքերը ու այնուհետեւ ամեն անգամ, երբ ի-
շում էր, որ իրան այդպէս չարաչար յաղթողը
դէսից-դէսից հաւաքած մարդկանց եւ վարդա-
պետների մի բանակ էր, ամօթից կատա-
ղում էր:

ցու, այլ եւ հայ հասարակութեան համար Մանր է արձանագրել, որ գերեզման է իջնում մի մարդ, որի ամբողջ կեանքը մարմնացած եւ ռանգ եւ գործունէութիւն էր: Մենք այսօր չենք տալիս այդ մարդու լիակատար կենսագրութիւնը եւ նրա հասարակական, դրական, եկեղեցական բեղմնաւոր գործունէութեան նկարագիրը, բայց համոզված ենք, որ առանց այդ նկարագրի էլ հայ հասարակութիւնը կը զգայ, որ Ստեփանէի մահը մի մեծ կորուստ է, ի նկատի ունենալով այն նըշանաւոր դերը, որ հանգուցեալը խաղացել է մեր հասարակութեան մտաւոր եւ բարոյական զարգացման ասպարէզում: Եւ ուստի յայտնի չէ կողմատու վաթսուական թուականների գործիչ Ստեփանէն, «Հայկական աշխարհի» խմբագիրը, կանանց կրթութեան առաջին ակոյտները, Թիֆլիսի առաջին գիմնազիայի պատմութեան ուսուցիչը, ուստի յայտնի չէ ինքն իր արդարեւ Ստեփանէն, որը քիչ եւ նեղ համարելով աշխարհական ասպարէզը եռանդուն գործունէութեան համար, իր միշտ կենդանի, միշտ բոցավառ, միշտ վառվառ բնաւորութեան համար, ընտրել եօթնամասնական թուականների սկզբին հետեւորական ասպարէզը, կարծելով թէ այդպէս աւելի օգտակար կը հանդիսանայ իր ազգին: Ընդհանրապէս, — ինչպէս ինքն ասում է իր կտակի մէջ, — իր ամբողջ բազմաշարժ կեանքը ազգի եւ եկեղեցու ծառայութեան մէջ սպասուելուց յետոյ, չը կարողացաւ արդէս օգտակար լինել, ինչպէս ինքն էր ցանկանում, «ի պատճառ հալածական եւ վշտալի կենաց», բայց ապաքանքները, անշուշտ, ցոյց կը տան, որ ինքն եպիսկոպոս Ստեփանէն ունէր մի անգուցական յատկութիւն, որից զրկված են շատերը — անսահման, կոյր առատ զէպի ճշմարտութիւնը, մարդկային հասկացողութիւնը եւ յոյս, որ մի օր այդ ճշմարտութիւնը պէտք է յաղթանակէ, եւ արժանաւոր, համեստ մշակը իր վարձը եւ հատուցումը ստանայ պատմութեան գնահատութեան մէջ:

Ունենալով եւսօրական հիմնաւոր կրթութիւն, բարձր ուսում, լինելով լայն, մարդասէր, ազատամիտ աշխարհահայեցողի եւ ձգտողութեան տէր մարդ, Ստեփանէն ծնված չէր հոգեւորական լինելու, մանաւանդ հայոց եկեղեցու մէջ, որը չէ քաջալերում ազնիւ, անկասկած, կրթված հոգեւորական գործիչներին, ոչ մի ապագայ չէ տալիս նրանց լայն գործունէութեան համար: Բայց նոյն իսկ այդ նեղ ասպարէզում, աննպատակ, ճշնոյթ պայմանների մէջ, հալածական, աստիճանական ինքն եւ պիսկոպոս Ստեփանէն կարողանում էր չը յուսահատուիլ, կարողանում էր գործել եռանդով,

անձնութիւնները եւ ամեն տեղ ցոյց էր տալիս իր բնաւորութեան մի այլ աչքի ընկնող յատկութիւնը — անշահասիրութիւն, կարողանում էր իր վառվառ, կենդանի քարոզներով խրախուսել, ոգեւորել նոյն իսկ ամենասկզբի տիկ անձանց:

Չենք կարող չը յիշել, ի հարկէ, որ նա իրեն մարդ, մանաւանդ իբրեւ մանկավարժ, ունէր եւ պակասութիւններ, որ նա, իր շուտ ընկալող, յուզող բնաւորութեան պատճառով, յարուցանում էր եւ գործունէութիւններ, գրգռում էր կրքերը, բայց ոչ ոք, ոչ ոք իսկ նրա հակառակորդները, չեն կարող չը խոստովանել, որ նա բարի մարդ էր, հաւատացող քրիստոնէայ, որ նա տոգորված էր լայն, մարդասէր, ազատամիտ հայեցողներով, որ նա ունէր վերահասարակական ձիրք եւ սաստիկ թշնամի էր խաւարամիտ, յետադէմ ուղղութեան:

Թէեւ ծերացած (նա 60 տարեկան էր), բայց հոգով, սրտով դեռ երիտասարդ, նա մեծուս, արտասանելով մահվանից մի քանի ժամ առաջ այս խօսքերը. «Թէեւ անապատ վանքի մէջ ջրատեղին ոչ ոք եւ գործունէութեան եռանդս, բայց Հայրապետի հրաւերով գնում եմ էջմիածին եւ յոյս ունեմ դեռ գործել»:

Դժբախտաբար, մի քանի ժամից յետոյ, նա անցաւ միւս աշխարհ: Հ. Ա.

ՄԱԿԱՐ ԱՂԱՅԻ ԿՏԱԿԸ
(Նամակ Ն.Նարիշկեանից)

—

Մենք, ինչքան էլ հարուստ լինենք, սովոր չենք, չը գիտենք մեր ձեռքով անել բարեգործութիւն: Դժբանք օր կեանքի սեղանի ինչոյնքին ենք նստած, մենք չունենանք կենք մեր զինքն ձեռքով հարստութեան, մենք խոստովում ենք, երկրպագում ենք նրան: Բայց, բարեբաղդաբար եւ դժբաղդաբար, ամեն բան վերջ ունի: Վերջանում է եւ մեր կեանքի ինչոյնքը: Մահը մօտենում է եւ միայն այդ րօպէին մեր հաւատը մեծապէս թուլանում է: Բայց, քանի որ հաւատը մեծապէս թուլանում է փող, շատ անգամ փչանքներ հարուստ սեղանից, կարծես չենք ատալ չարտած, այն հասարակութիւնը, որ տասնեակ տարիներ պատիւ եւ յարգանք էր ցոյց տալիս մեր մեծաշնորհ, աչքի առաջ ունենալով այդ ողորմելի փչանքները...

Մակար Պօպովի կտակի խնդիրը ակամայ յիշեցրեց ինձ այդ ծանր եւ տխուր մտքերը: Նոր-Նախիջևանցի Մակար Պօպով Ստաւրօպոլի յայտնի հարուստ վաճառական էր, որ թողեց մի մեծ, շարունակ 40 — 50 տարիներ կօպէկներով ժողոված հարստութիւն: Մակար-աղան զրեց չորս, հինգ կտակներ, ամեն մի կտակի մէջ նա թողնում է մի օր եւ գումար ազգային հիմնարկութիւններին, բայց, տարօրինակ երեւոյթ. քանի գնում էր, Մակար-աղան աւելի հարստանում էր եւ քանի Մակար-աղան աւելի հարստանում էր, այնքան էլ աւելի... Կրճատում էր, փոքրացնում էր բարեգործական նպատակով թողած գումարները...

Երջանկայիշատակ, ազնիւ, Լազարեանների գաղթիները Մակար-աղայի քունը փախչում էին: Մէջ օր էլ որ զարթնեց Մակար-աղան, շտապով գնաց նստարանի մօտ եւ հինգ հարիւր հազար ռուբլի կտակեց, որպէս զի այդ փողով բացվի Նոր-Նախիջևանում «Արեւելեան լեզուների ձեռնարան», հայոց լեզուն եւ կրօնը — պարտադիր են: Հարիւր հազարի պիտի կառուցվէր չէնք եւ չորս հարիւր հազարի տոկոսներով ոչ չէ ձեռնարան պահել կարելի չէ, — մենք հասկանում էինք, դիտելից այդ, բայց անբաւ ուրախ էինք եւ չորս հարիւր հազար անգամ դուրս էինք խոսարհում եւ պատիւ տալիս Մակար-աղային:

Սեւա Մակար-աղան Հարստութիւնը հասնում էր եօթի միլիոնի: Կարգայինք վերջին կտակը եւ զարմացանք: Եւ զարմանալու բան էր, որովհետեւ Նոր-Նախիջևանի թողած էր միայն հարիւր հազար ռուբլի — արհեստագիտական դպրոցի համար եւ այն էլ գրված այնպէս մութ եւ կարճաօտ, որ բնիկ նոր-Նախիջևանցիներին հարկիւր ռուբլի էլ օգուտ չը կայ Մակար-աղայի կտակից:

Սրանից մի քանի տարի առաջ մենք առաջարկել էինք այս հարիւր հազարը յատկացնել հայոց արհեստագիտական դպրոցին: Դուռնան ընդունեց մեր առաջարկութիւնը, բայց նախադնոյ ատմանը անկասօն համարեց այդ որոշումը, պատճառը՝ փողը թողնել էր բնիկ նախիջևանցիների համար: Այնպէս էլ մնում է փողը արքունի դրամանոցում: Սօստ աւելի, երբ յիշելի հարուստ սեղանից չենք ատալ չարտած փչանքները...

Դուռնան այժմ որոշել է դիմել դատաստան Մակար-աղայի կտակը ոչնչացնելու համար: Առարկում են, թէ Մակար-աղան ինչպէս որոշութեան րօպէին է գրել վերջին կտակը: Դա պարտաւորում է: Մենք մի անգամ ապարդիւն դիմեցինք դատաստան արկին Գոգոյեանի կողմէն (Պօպովի կտակի խնդիրը ակամայ յիշեցրեց ինձ այդ ծանր եւ տխուր մտքերը: Նոր-Նախիջևանցի Մակար Պօպով Ստաւրօպոլի յայտնի հարուստ վաճառական էր, որ թողեց մի մեծ, շարունակ 40 — 50 տարիներ կօպէկներով ժողոված հարստութիւն: Մակար-աղան զրեց չորս, հինգ կտակներ, ամեն մի կտակի մէջ նա թողնում է մի օր եւ գումար ազգային հիմնարկութիւններին, բայց, տարօրինակ երեւոյթ. քանի գնում էր, Մակար-աղան աւելի հարստանում էր եւ քանի Մակար-աղան աւելի հարստանում էր, այնքան էլ աւելի... Կրճատում էր, փոքրացնում էր բարեգործական նպատակով թողած գումարները...

աղան մէջ նա թողնում է մի օր եւ գումար ազգային հիմնարկութիւններին, բայց, տարօրինակ երեւոյթ. քանի գնում էր, Մակար-աղան աւելի հարստանում էր եւ քանի Մակար-աղան աւելի հարստանում էր, այնքան էլ աւելի... Կրճատում էր, փոքրացնում էր բարեգործական նպատակով թողած գումարները...

Երջանկայիշատակ, ազնիւ, Լազարեանների գաղթիները Մակար-աղայի քունը փախչում էին: Մէջ օր էլ որ զարթնեց Մակար-աղան, շտապով գնաց նստարանի մօտ եւ հինգ հարիւր հազար ռուբլի կտակեց, որպէս զի այդ փողով բացվի Նոր-Նախիջևանում «Արեւելեան լեզուների ձեռնարան», հայոց լեզուն եւ կրօնը — պարտադիր են: Հարիւր հազարի պիտի կառուցվէր չէնք եւ չորս հարիւր հազարի տոկոսներով ոչ չէ ձեռնարան պահել կարելի չէ, — մենք հասկանում էինք, դիտելից այդ, բայց անբաւ ուրախ էինք եւ չորս հարիւր հազար անգամ դուրս էինք խոսարհում եւ պատիւ տալիս Մակար-աղային:

Սեւա Մակար-աղան Հարստութիւնը հասնում էր եօթի միլիոնի: Կարգայինք վերջին կտակը եւ զարմացանք: Եւ զարմանալու բան էր, որովհետեւ Նոր-Նախիջևանի թողած էր միայն հարիւր հազար ռուբլի — արհեստագիտական դպրոցի համար եւ այն էլ գրված այնպէս մութ եւ կարճաօտ, որ բնիկ նոր-Նախիջևանցիներին հարկիւր ռուբլի էլ օգուտ չը կայ Մակար-աղայի կտակից:

Սրանից մի քանի տարի առաջ մենք առաջարկել էինք այս հարիւր հազարը յատկացնել հայոց արհեստագիտական դպրոցին: Դուռնան ընդունեց մեր առաջարկութիւնը, բայց նախադնոյ ատմանը անկասօն համարեց այդ որոշումը, պատճառը՝ փողը թողնել էր բնիկ նախիջևանցիների համար: Այնպէս էլ մնում է փողը արքունի դրամանոցում: Սօստ աւելի, երբ յիշելի հարուստ սեղանից չենք ատալ չարտած փչանքները...

Դուռնան այժմ որոշել է դիմել դատաստան Մակար-աղայի կտակը ոչնչացնելու համար: Առարկում են, թէ Մակար-աղան ինչպէս որոշութեան րօպէին է գրել վերջին կտակը: Դա պարտաւորում է: Մենք մի անգամ ապարդիւն դիմեցինք դատաստան արկին Գոգոյեանի կողմէն (Պօպովի կտակի խնդիրը ակամայ յիշեցրեց ինձ այդ ծանր եւ տխուր մտքերը: Նոր-Նախիջևանցի Մակար Պօպով Ստաւրօպոլի յայտնի հարուստ վաճառական էր, որ թողեց մի մեծ, շարունակ 40 — 50 տարիներ կօպէկներով ժողոված հարստութիւն: Մակար-աղան զրեց չորս, հինգ կտակներ, ամեն մի կտակի մէջ նա թողնում է մի օր եւ գումար ազգային հիմնարկութիւններին, բայց, տարօրինակ երեւոյթ. քանի գնում էր, Մակար-աղան աւելի հարստանում էր եւ քանի Մակար-աղան աւելի հարստանում էր, այնքան էլ աւելի... Կրճատում էր, փոքրացնում էր բարեգործական նպատակով թողած գումարները...

բարեգործական հիմնարկութիւններին: Մակար-աղայի յիշատակը յաւերժացնելու համար... Ինչու: — Հէնց նրա համար, որ իր աւուրեց չունենի Կոտակատարները՝ հանգուցեալի կրօն եւ բժիշկ Ի. Ալաշայեան (աւարտած Լազարեան ձեռնարանը) բարի մարդիկ են, բայց բարութիւնը չէ անվում ուրիշի գրպանից: Ուրիշը՝ դիտել, ով է: — Դա փոքրիկ Յարութիւն է՝ Մակար Պօպովի գաւալը: Յարութիւն Պօպովը — եօթի տարեկան է միայն եւ արդէն ունի եօթի միլիոն ռուբլի: Երբ Յարութիւնը չափաւոր դառնայ, նրա կայքը կը կրկնապատկի եւ նա կը լինի տէր տասնհինգ միլիոնների: Տասնհինգ միլիոն ռուբլի մի ահագին ոյժ է: Բարի, թէ չար: — Այդ կախած կը լինի երկու կտակատարների կամքից: Յարութիւնը փողը էլ, նրա սիրտն անարատ է, իսկ ինչքան անկարող ջուրէլ չարն ու բարին... Նրա առաջ բաց են բոլոր ճանապարհները, ըստոր, իբրեւ դժոխք՝ եւ գեղեցիկ՝ իբրեւ դրախտ: Եթէ Յարութիւն Պօպովը կը հետեւի հօր օրինակին, ամբողջ կեանքը միայն դիպելով, շտապելով ոսկին, փախչելով հասարակական գործերից, խուլ դէպի ժողովրդի աղաչանքը, կոյր դէպի նրա լացը եւ անտարբեր նրա ծանր վիճակին, Յարութիւնի տասնհինգ միլիոնները մեզ համար կը լինեն միայն պատիժ, աղէտ եւ անէծք... Իսկ եթէ Յարութիւնի սրտի մէջ կը տակալատարները ցանկացան եւ վառեցին սիրոյ եւ բարութեան կրակը եւ մեր Յարութիւնը ճանաչեց եւ սիրեց մեզ, աշխատելով օգնել ժողովրդին, դարմանելով նրա անթիւ, անհամար ցաւերը, վերքերը — Յարութիւնի տասնհինգ միլիոնները մեզ համար կը դառնան երկնքի օրհնանքներ:

Ճանապարհները շատ են անկասկած: Շտապեցէ ուրեմն, բարի կտակատարներ, վառել այդ փոքրիկ սիրտը եւ դուք կը կատարէք մեր առաջ մեծ ծառայութիւն եւ մի եւ նոյն ժամանակ ձեր իսկական պարտքը հասկացած, ճանաչած, կատարած կը լինէք: Այո, վառեցէ այդ սիրտը, քանի որ ուշ չէ դեռ, քանի որ կրակը ձեր ձեռքին է, իսկ սիրտը կարօտ այդ կրակին... Ժողովուրդը համբերող է, նա սպասում է, սպասում միշտ բարի Յարութիւնների գալուն, չար Յարութիւններից արդէն շատ բեղարած... Դր. Չախուշեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, նոյեմբերի 14-ին, Նորին Կայսերական Մեծութիւն Այրի Կայսրուհի Մարիա Ֆեօդորովնայի ծննդեան տօնախմբութեան օրը, Ալեքսանդր-Նեվսկու զինուորական տաճարում,

Բելգրադի փառաւոր յաղթութիւնից յետոյ Հունիսի դարձաւ օգնութեան կանչեց արեւմտեան թագաւորներին. նա յոյս ունէր, որ քրիստոնէայ երկիրները վեց ամսում յետ կը խլվին իսլամի ճանկերից եւ Եւրոպայում այլ եւս մի հատ թիւրք չի մնայ: Թէեւ ամեն տեղ հիացմունք էր պատճառում Հունիսի յաղթութիւնը, բայց եւ այդպէս, ոչ ոք տեղից չը շարժվեց նրան օգնելու եւ հերոսը վարակվելով մի ծանր հիւանդութիւնից, մեռաւ Կապիտոլինո վարչապետի գրկում (1456): Մնաց միւս, աւելի անձնազակ հերոսը, արժանացի Իսթէն-դէն-բէկը: Այս մարդը իր խելքի ոյժով իր քաջութեամբ միացրեց ալբանական ցեղերը, հայրենասիրական զգացմունք ներշնչեց այդ կոպիտ լեռնայիններին եւ Ալբանիան համախարհային դեր էր կատարում: Զուր էին թիւրքերի բազմաթիւ փորձերը՝ Մեհեմէդ II շատ անգամ յարձակումներ գործեց, բայց հանդիպեց նոյն հերոսական դիմադրութեան, որը կոտրել չէր կարողացել եւ նրա հայր Մուրադը. նրա զօրքերը յաղթվում էին, այնպէս որ վերջի վերջին օսմանից աշխարհակալը ստիպված էր ճանաչել Ալբանիայի անկախութիւնը:

Իրի Կատարիստ բաւականաչափ էր իր Ալբանիան պաշտպանելով. նա չունէր Հունիսի լայն ծրագիրները՝ թիւրքերին Եւրոպայից վերջնապէս մաքնելու: Բայց եւ այդ նեղ սահմանների մէջ հերոսը դարձել էր քրիստոնէայ աշխարհի պարձանքը, իսկ երբ Հոսթի գահը բարձրացաւ Պիոս II պապը, Իսթէն-դէն-բէկը հրաւեր ստացաւ խաչակիր զինուորութեան գլուխ անցնելու: Ալբանիայի իշխանը չը հրաժարվեց այդ մեծ եւ պատասխանատու պաշտօնից: Բայց երկար եւ ապարդիւն կերպով սպասեց Եւրոպայի խաչակիրներին:

Պիոս II իր նախորդի նման ոչինչ ջանք չը ինչպիսիք արագապատմ սկսելու համար: 1459 թ.ին նա վեհաժողով հրաւիրեց Մենտուա քաղաքը՝ այդ պատերազմի մասին թա-

ղաւորների եւ իշխողների մէջ համաձայնութիւն կայացնելու համար: Բայց եւրոպական անտարբերութիւնն այս անգամ էլ եկաւ ցոյց տալու, որ խաչակրական արշաւանքների ժամանակը անցել է անդառնալի կերպով: Մենտուայի ժողովը սակաւամարդ էր. Գրիստոսի փոխանորդի հրաւերը ընդունել էին միայն մի քանի իտալական եւ գերմանական մանր թագաւորներ եւ մի քանի զեպաններ: Ժողովին նախագահում էր պապը եւ բայցվի մի տեսարան, որ այնքան սովորական զբոսն աշուտ հետեւ արեւելեան հարցի պատմութեան մէջ: Եղան փայլուն ճառախօսութիւններ, որոնց մէջ յայտնվում էր ատկութիւն դէպի թիւրքերը: Բայց չնչաւ մէկը, որ պատրաստակաւութիւն յայտնէր իսկոյն զօրք հանելու կամ գնէ մի ռաբ եւ է նուիրատուութիւն անելու յօգուտ խաչակիր արշաւանքի: Դա եւրոպական առաջին կօպէրէն էր. Յունաստանն ու Բոսնիան ուղարկել էին նրան իրանց աղաչանքներն ու հեծեմանքները, բայց զրանք չը փոխեցին ժողովի արամադրութիւնը:

Պապը, այնուամենայնիւ, չը յուսահատվեց: Նա կոնգրէս հրատարակեց, որով հրաւիրում էր քրիստոնէաներին զինվել մահմեդականների դէմ եւ այդ նպատակով տասնորդական հարկ զրեց քրիստոնէաների եւ նոյն իսկ հրեաների վրա: Կոնգրէսը նոյնպէս աջողութիւն չունեցաւ. այն ժամանակ Պիոսը մի երկար գրութեամբ դիմեց Մեհեմէդ II-ին, համոզելով նրան ընդունել քրիստոնէութիւն եւ իր կողմից խոստանալով ճանաչել նրան, միլիոններից յետոյ, Կոնստանտին XII-ի յաջորդ եւ Բիւզանդիայի կայսր: Այս գրութիւնը ամենից լաւ բացատրում է թէ Հոսթի պապերը ինչպէս էին հասկանում արեւելեան հարցը: Դա քրիստոնէութեան հարց էր, եւ եթէ Օսմանի գոռոզ ժառանգը, որ իր յաղթութիւնների համար ստացել է Ֆաթիմ (յաղթող) անունը, ընդունէր իրան ուղարկված հրաւերը՝ քրիստոնէայ

միլիոնով, ի հարկէ կաթօլիկ եկեղեցու ծէսով, այնուհետեւ ամեն ինչ վերջացած կը համարվէր եւ այլ եւս ոչինչ վտանգ ու անպարտաւորութիւն չէր լինի, որ օսմանիները նստել են եւրոպական հողի վրա: Եթէ Կ. Պօլսին վիճակված էր նորից իր մէջ ունենալ մի քրիստոնէայ կայսր, Պիոս II կը կամենար, որ այդ կայսրը լինի մի կաթօլիկ թիւրք, պապի հօգնակարութեան տակ, եւ ոչ թէ մի օրթօ-դօքս յոյն *): Այսպէս, ուրեմն, Հոսթի համար կրանքները դէպի արեւելեան քրիստոնէաները ամենից առաջ եւ ամենից շատ կաթօլիկ պրօպագանդայից էր բղկում: Բայց Մեհեմէդ ֆաթիմը համոզված էր, որ առանց կրօնափոխութեան եւ առանց պապի հաճութիւնը ստանալու էլ կարելի է տիրել Բիւզանդիայի աւելորակների վրա: Տեսնելով, որ իր դիմումը ապարդիւն է, Պիոս II պատերազմ յայտարարեց թիւրքերի դէմ, գլխաւոր հրամանատար նշանակելով Իսթէն-դէն-բէկին: Նա գնաց Անկոնա, ուր սպասում էր, թէ երբ կը պատրաստվի նաւատորմը՝ կռիւ գնալու: Բայց հէնց այդտեղ էլ վախճանվեց եւ նրան ուղեկցող կարգիւնները վերադարձան Հոսթի նոր պապ ընտրելու համար, որի վրա պարտք պիտի դնվէր շարունակել պատերազմի պատրաստութիւնները:

Եթէ կրօնական զգացմունքները այնքան թոյլ էին, որ պապերի կողմը չէին կարողանում բոլորեցիկ արեւելեան քրիստոնէաների սպասած «Աստուածառաք պատերազմը», կար համակրութեան մի ուրիշ կապ, որ աւելի հիմնաւոր էր, աւելի երկարատեւ: Դարի առաջաւոր հոգանքները ստեղծել էին մի վառ հեղինակութիւն, որ գնալով ծառայում էր ամեն տեղ եւ մոտում էր բոլոր չրջանների մէջ: Թիւրքական նուաճումները հարկադրեցին զարգացած յոյներին թողնել իրանց դժբախտ հայրենիքը եւ անցնել Իտալիա, տանելով իրանց

հետ իրանց կաթօլիկներին: Այդտեղ փախստականները բային զպրոցներ, ուսուցիչ հայեր, սայան ու սկսեցին արժարձել հեթանոսական Նիլոպոլիս մարտը լոյսը: Հոսթիստները, դասական գրականութեան եւ արեւմտեաների այդ ոգեւորված աշակերտները, որոնք իրանց ժամանակի ամենահեղինակաւոր մարդիկն էին, մեծ կախիծով էին յիշում, որ Հոսթիստի, Ֆիդի-ասի, Պերիկլէսի, Արիստոտելի չքնաղ հայրենիքը մատնված է ասիական բարբարոսների իշխանութեան: Ինչպէս մի ժամանակ խաչակիրները վառված էին Գրիստոսի գերեզմանը ազատելու մտքով, այնպէս էլ վերածնութեան դարերի կրթված մարդուն ոգեւորում էր այն հողի ազատութիւնը, որի վրա մի ժամանակ ապրել եւ գործել էին այնքան անմահներ:

Սակայն հիլլէնաստիւթիւնն էլ բաւականաչափ էր միայն պատմական բարի ցանկութիւններով. որոնք, որքան էլ վառ եւ անկեղծ լինէին, չէին կարող ստանանցնել Օսմանեան պետութեան հիմքերը: Աւելի իրական եւ ծանրակշիռ էին թուում այն յոյսերը, որ զարթեցնում էր Ռուսները, Հիւսիսային այս պետութիւնը դեռ այնքան թոյլ էր եւ չը կարճ մակերպված, որ դեր չէր կատարում եւրոպական գործերի մէջ, բայց կարեւորութիւն էր էր ստանում Կ. Պօլսի նուաճումից յետոյ Ռուսաց պետութիւնը Բիւզանդիայի պտուղն էր: յոյներից էին ուսմանը վերցրել քրիստոնէական հաւատը, յոյներն էին ուսու ժողովրդի ուսուցիչները կրօնական գործերի, գրականութեան, քաղաքակրթական հարցերի մէջ: Այն օրվանից, երբ Բիւզանդիան փչեց իր վերջին շունչը, Մոսկովեան թագաւորութիւնը մնաց միակ յուսահաւան երկիրը, որ ազատ է ու անվախ: Բնականաբար, այդ պետութիւնն էլ պիտի իրան համարէր Բիւզանդիայի միակ ժառանգը:

(Ն. Չախուշեան)

*) Гривинусъ, т. V, стр. 19.

(2)